

Ո. Գ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ, Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ, Հ. Ա. ՕՀԱՆՅԱՆ, Խ. Գ. ԲԱ-
ԴԻԿՅԱՆ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, ՀՍՍՀ ԳԱ
հրատարակչություն, 1976, 856 էջ:

Հայկական ՍՍՀ ԳԱ Հրաշյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը շնորհակալ աշխա-
տանք է կատարել՝ հրատարակելով ժամանակակից արևելահայերենի կառուցվածքի դիտական
ամբողջական ուսումնասիրությունը երեք հատորով: Առաջին հատորը (1979 թ.) ներկայաց-
նում է հնչյունաբանությունն ու բառագիտությունը, երկրորդ հատորը (1974 թ.)՝ ձևաբա-
նությունը, իսկ երրորդ հատորը (1976 թ.)՝ շարահյուսությունը: Կարելի է ասել, որ այս հա-
տորները ժամանակակից հայերենի ծավալուն ու ամբողջական հետազոտությունն են, որոնցից
յուրաքանչյուրը մի-մի հաջողված ու ամբողջական ուսումնասիրություն է և ամփոփում է
ժամանակակից արևելահայերենի հնչյունաբանության, բառագիտության, ձևաբանության ու
շարահյուսության վերաբերյալ հրապարակի վրա եղած, այդ թվում և հեղինակների մենագրու-
թյուններում ու հոդվածներում արտահայտած, նորն ու առաջավորը: Սակայն քիչ կլինի, եթե
ասենք, թե հիշյալ հատորները մինչ այս եղած ուսումնասիրությունների ամփոփումն ու ընդ-
հանրացումն են: Ի պատիվ հեղինակների պիտք է ընդգծել, որ շատ հարցեր մեկնաբանված
են նորովի, և ընթերցողն այստեղ կգտնի նոր փաստեր ու դրույթներ մեր լեզվի այս կամ այն
մակարդակի վերաբերյալ: Օգտագործելով հսկայական քանակությամբ լեզվական ու գեղար-
վեստական գրականություն՝ հետազոտողներին հաջողվել է տալ գրեթե մի լիակատար ուսում-
նասիրություն: Տեսական այս հետազոտությունն ունի նաև մեծ չափով գործնական նշանակու-
թյուն, հեղինակներն աշխատել են նրան տալ նորմավորող բնույթ. հաճախ նշվում են գրա-
վոր խոսքում տեղ գտած սխալ ձևերը և մերժվում, թեև երբեմն էլ սխալը ճշտի տեղ է անց-
կացված:

Մեր խոսքը կոնկրետացնենք երրորդ հատորի վրա, որի որոշ բաժիններ ներկայացված
են հեղինակների նախորդ ուսումնասիրություններում:

Ավելի քան վաթսու տարի է անցել Մ. Աբեղյանի «Աշխարհարարի շարահյուսության»
լույս տեսնելուց (1912 թ.): Անշուշտ, այդ տարիների ընթացքում մեր լեզվում նկատելի փո-
փոխություններ են կատարվել ու ինչքան էլ քերականությունը պահպանողական լինի, այն ար-
տահայտվել է նաև շարահյուսական համակարգում: Փոխվել է նաև լեզվաբանական միտքը,
որն այս կամ այն չափով տեղ է գտել ժամանակակից հայերենի շարահյուսության վերաբեր-
յալ գրված մենագրություններում ու հոդվածներում: Ուստի, հատորի հեղինակները պիտի
հաշվի առնեին մի կողմից այդ քննադատում եղած նվաճումները, այն արժեքավորը, որ կաս
Մ. Աբեղյանի և հետագա հեղինակների ուսումնասիրություններում, մյուս կողմից՝ այն նորը,
փոփոխությունները, որ տեղի են ունեցել թե՛ մեր լեզվական կառուցվածքում և թե՛ լեզվաբա-
նական գրականության մեջ: Ուղղամիտ լինելու համար պիտի նշել, որ հատորի հեղինակներն
ուսումնասիրությունը տարել են այդ սկզբունքով և ստեղծել ժամանակակից հայերենի այսօր-
վա շարահյուսությունը: Շարահյուսությանը նվիրված այս հատորը երևույթ է հայերենի շա-
րահյուսության ուսումնասիրության պատմության մեջ:

Լավ է ներկայացված ժամանակակից արևելահայերենի բառակապակցությունների քննու-
թյունը, հատկապես զրանց կառուցվածքային առանձնահատկությունները, կաղապարները
(ն. Պառնասյան): Իջրդրված են նախադասության քերականական հատկանիշները, ենթակայի
ու ստորոգյալի սահմանումները, նորագույն ըմբռնումով են ներկայացված նախադասության
երկրորդական անդամները՝ իբրև բայական և անվանական լրացումներ (Հ. Օհանյան): Գրեթե
սպառիչ քննված են նախադասության հնչերանգային ու կառուցվածքային տեսակները, առանձ-
նապես միակազմ նախադասությունները (Ս. Աբրահամյան), հայերենի շարահյուսության ձևերը
(Խ. Բաղիկյան):

Ի տարբերություն դպրոցական դասագրքում տրված բացատրության, Ս. Աբրահամյանը
բարդ նախադասությունների տեսակները միանգամայն ճիշտ, գիտական սկզբունքով հիմնա-
վորում է բարդության կազմում եղած նախադասությունների քերականական հարաբերությամբ,
այսինքն՝ առաջին պլանի վրա է դնում կապակցության քերականական կառուցվածքային հատ-

կանխիչը Այստեղ համադասությունն ու ստորադասությունը դիտվում են իրեն կապակցության քերականական եղանակներ, ինչպես արված է Մ. Արեղյանի «Աշխարհաբարի շարահյուսության» մեջ:

Հատորի վերջում տրված նոր՝ «նախադասությունների կապակցություն» բաժնում Ս. Արարահամյանը քննում է նախադասությունների միջև եղած կապակցության միջոցները խոսքի մեջ, նախադասությունների համակարգից դուրս: Թեև այս դեպքում էլ բարդության բաղադրիչների մեջ եղած հարաքերություններ են երևան դալիս՝ միավորական, ներհական, մեկնական, տրոհական, պատճառ-հետևանքային, զիջական, ժամանակի, տեղի, որոշիչային, բայց լեզվական հետաքրքիր երևույթ է, թե վերջականից կամ նոր տողից հետո եկող նախադասությունն ինչպե՞ս է կապվում նախորդ նախադասության հետ, կապակցման ի՞նչ միջոցներ են երևան դալիս:

Քանիցս մենք գրել ենք¹, որ միավորյալ նախադասություն, իրեն առանձին տեսակ, գոյություն չունի, կան բազմակի ենթականերով կամ բազմակի ստորոգյալներով նախադասություններ, առաջինները պարզ նախադասություններ են, երկրորդները՝ բարդ: Միանգամայն իրավացի է Ս. Արարահամյանը՝ միավորյալ նախադասությունը հանելով նախադասությունների համակարգից:

Մի երկու հարցի վերաբերյալ արտահայտենք մեր կարծիքը:

1. Ժամանակակից հայերենի ստորոգյալը (հեղինակ՝ Հ. Սահյան) ներկայացված է երկու տեսակով՝ բայական և անվանական, իսկ բայականն էլ՝ պարզ և բաղադրյալ, ճիշտ բաժանում է: Բայց, մեր կարծիքով, անվանականի փոխարեն պետք է օգտագործել անվանաբայական: Նախ՝ այն պատճառով, որ հայերենում միայն անունով ստորոգյալ չի արտահայտվում, անվան հետ անպայման դիմավոր բայ է լինում, այդ ստորոգյալը բաղադրվում է որևէ անունով և դիմավոր բայով, ուստի անվանաբայական կազմություն ունի: Մյուս կողմից՝ անվանական կոչում ենք այն անդեմ նախադասությունները, որոնց գերադաս անդամը որևէ անուն է: Ինչո՞ւ միևնույն անվանական տերմինով կոչենք երկու տարբեր հասկացություններ, երբ ստորոգյալը կարելի է կոչել անվանաբայական, այսինքն՝ բաղադրիչների անունով, ինչպես որ բայի անցյալի անկատարը կոչում ենք դերբայի և օժանդակ բայի անունով:

Գալով բայական բաղադրյալ ստորոգյալի կազմությանը՝ պիտի ասենք, որ այն բավական խախտող հիմքով է ներկայացված: Այն հարցին, թե ո՞ր դեպքում է դիմավոր բայի հետ անորոշ դերբայը բաղադրյալ ստորոգյալ կազմում, անհամոզիչ բացատրություն է տրված: Աշխատության մեջ դիմավոր բայերը, որոնք անորոշ դերբայի հետ բաղադրյալ ստորոգյալ են կազմում և կոչվում են եղանակավորիչ բայեր, ներկայացված են վեց խմբով, յուրաքանչյուր խմբում ընդգրկված են հինգ-վեց իմաստներ, իսկ յուրաքանչյուր իմաստի համար բերված են տասնյակ օրինակներ, որոնց քանակը սահմանափակ չէ: Օրինակ՝ ա կետի տակ բերված են գործողության սկիզբ, ընթացք, ավարտ, ցանկություն, հնարավորություն, կարողություն ցույց տվող բայեր և ավելացված է ևս այլն, ք կետի տակ՝ ձգտում, հրաման, հակում, որոշում, խոստում, որոնց հաջորդում է դարձյալ ևս այլն: Այսպես վեց խումբ ևս այլն-ով: Ստացվում է, որ բոլոր դեպքերում անորոշ անորոշ դերբայները դիմավոր բայի հետ կազմում են բայական բաղադրյալ ստորոգյալ:

Մեր կարծիքով այս ստորոգյալի կազմությունը ներկայացնելիս հաշվի չի առնված մի կարևոր հանգամանք՝ խնդրառությունը: Բայական բաղադրյալ ստորոգյալ են համարված, օրինակ՝ 1) սկսեց կառույց, սովորել է ծխել, խոստանում է լռել, ցանկանում է օգնել, վճռել է ամուսնանալ, սիրում էր հեղճել, հրամայել էր (սայլն) ուղարկել, առաջարկում է (խնդիրը) լուծել, 2) ստիպված էր լսել, ձգտում էր ապացույցել, համաբանվում էր վիճել, խուսափում էր նայել, գլուխը հանում էր հանդիմանել, պաշարեց երգել, 3) պատրաստ է գնկուղել, ուրախ եմ հայտնել, համաձայն չէր պիտանալ և այսպիսի այլ ստորոգյալներ² (էջ 160—162):

Ինչպես երևում է օրինակներից, այս կառույցներում տեղ են գտել տարբեր հոլովներով խնդիր պահանջող բայեր: 1 խմբի՝ սկսել, սովորել, խոստանալ, ցանկանալ, վճռել, սիրել, հրամայել, առաջարկել բայերը ներգործական սեռի են և առնում են ուղիղ խնդիր, ուստի

1 Ս. Վ. Գյուլյուրոզյան, Ակնարկներ հայոց լեզվի մեթոդիկայի, Երևան, 1970, նույնի, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1978:

2 Նույնիսկ ենթական է ստորոգյալի բաղադրիչ համարված անկարելի է պատմել, անհնար է շարունակել, ապարդյուն է բռնել, անհրաժեշտ է մեղմել ատենել օրինակներում (էջ 161):

դրանց հետ դրված անորոշ դերբայները ուղիղ խնդիրներ են, անկախ որոշյալ, թե անորոշ առումներից: Ինչպես որ հիվանդը խնձոր (դեղորայք) է ուզում նախադասության մեջ խնձոր (դեղորայք) բառն է ուղիղ խնդիր. այդպես էլ հիվանդը բուժվել է ուզում (կամ խնդրում, պահանջում) նախադասության բուժվել-ն է ուղիղ խնդիր և պատասխանում է ի՞նչ է ուզում (պահանջում, խնդրում) հարցին: Այս խմբում կան նույնիսկ օրինակներ, որոնցում բայերը տարբեր ենթակաների են առնչվում. հրամայեց զենքը լցնել, առաջադրեց խնդիրը լուծել նախադասություններում հրամայողն ուրիշ է, ցած ղեկըն ուրիշ, առաջարկողը մի մարդ է, խնդիր լուծողը՝ մի այլ մարդ. ինչպե՞ս կարող են այդ բայերը միանալ, մի ստորոգյալ լինել: Ի տարբերություն գրքում եղած կարծիքի՝ պրոֆ. Լ. Արրահամյանը սրանց անորոշ դերբայները ուղիղ խնդիր է համարում:

II խմբի բայերը՝ ստիպվել, համարձակվել, ձգտել, խուսափել, զգուշանալ, դադարել ուղիղ խնդիր չեն պահանջում, դրանք առնում են տարբեր քնույթի անուղղակի խնդիրներ, այսպես՝ ստիպվել, համարձակվել, ձգտել (այլև՝ ջանալ, աշխատել) պահանջում են տրականով անուղղակի խնդիրներ (ստիպված էր պատասխանելու, համարձակվում էմ առաջադրելու, ջանում, ձգտում, աշխատում էր ապացուցելու), իսկ խուսափել, զգուշանալ, դադարել բայերը՝ բացառականով անուղղակի խնդիրներ (խուսափում էր հանդիպելուց, դադարեց հանախելուց, զգուշանում էր շատ խոսելուց): III խմբի օրինակներում կան նաև անվանարայական ստորոգյալներ, որոնց հետ գործածված անորոշ դերբայները թեթև հոլովներով պիտի դրվեին՝ պատրաստ եմ զեկուցելու, ուրախ եմ հայտնելու, համաձայն չեմ գիտանալու և այլն: Եթե առաջին խմբի բայերը ներգործական սեռի են և նրանց հետ անորոշ դերբայները խնդրառական կապով են կապված՝ ուղիղ խնդիր են, ապա երկրորդ խմբի բայերը չնդոթ սեռի են և անուղղակի խնդիրներ են առնում. նրանց հետ գործածված թեթև ձևերով անորոշ դերբայները անուղղակի խնդիրներ են տրական, բացառական հոլովներով (ձգտում է առդարանալու, խուսափում էր պատասխանելուց), անուղղակի խնդիրներ են նաև III խմբի՝ ուրախ եմ հայտնելու, համաձայն չեմ գիտանալու նախադասությունների ընդգծված անորոշները: Սակայն, հաճախ, այս երկու խմբի անորոշները հանդես են գալիս ուղիղ ձևով, անորոշ առումով. այսպես՝ խուսափում էր պատասխանել, ձգտում էր առդարանալ, համաձայն չեմ գիտանալ, ուրախ եմ հայտնել և այլն. որի հետևանքով անորոշները խնդրական կապի մեջ չեն բայ-ստորոգյալների հետ, չեն ընդունել նրանց թեևադրած հոլովը. ուստի նրանց յրացումը չեն, և քերականները այն միացնում են ստորոգյալին՝ կազմելով բայական բաղադրյալ կամ բարդ ստորոգյալ: Այս վերջին երկու խմբերի անորոշ դերբայները պրոֆ. Կ. Սևակն անվանում է բացարձակ աներևույթ (անորոշ):

Ուրեմն, անորոշ դերբայի հիշյալ կիրառությունը որոշելիս պետք է առաջնորդվել խնդրառությամբ. ներգործական սեռի բայերի հետ գործածված անորոշները համարել ուղիղ խնդիր, իսկ չնդոթ սեռի բայերի հետ գործածվածները, որոնք չեն ընդունել բայ-ստորոգյալի թեևադրած հոլովը, խնդրառական կապի մեջ չեն նրա հետ, համարել ստորոգյալի լրացրիչ³:

119 էջում այն հարցին, թե ինչո՞ւ են տարբերվում մեծ ֆաղաֆ, զեղեցիկ այգի, լաբձը լեռ կապակցությունները ֆաղաֆը մեծ է, այգին զեղեցիկ է, լեռը բաբձը է կապակցություններից, Ս. Արրահամյանը տալիս է հետևյալ բացատրությունը. «...առաջին շարքի բառակապակցությունների միջոցով փաստը չի արձանագրվում, դրանով ոչինչ չի հաստատվում կամ ժխտվում, մինչդեռ երկրորդ կարգի բառակապակցություններում խոսողը մեծ հատկանիշը վերագրում է ֆաղաֆին, դրանով հավաստում, հաստատում է քաղաքի մեծ լինելը: Հատկանիշի այսպիսի վերագրումը կոչվում է ստորոգում: Ստացվում է, որ մեծ ֆաղաֆ կապակցության մեջ մեծ-ը ֆաղաֆին չի վերագրված, չի հաստատված քաղաքի մեծ լինելը, որը ճիշտ չէ: Ընդհակառակը, 140 էջում Հ. Օհանյանը գրում է, թե սև աչքեր, զեղեցիկ հագուստ կապակցություններում հատկանիշները վերագրված են առարկաներին, բայց ստորադասական հարաբերությամբ: Սա ճիշտ է: Երկու դեպքում էլ վերագրում կա՝ թե՛ մեծ ֆաղաֆ, թե՛ ֆաղաֆը մեծ է օրինակներում, սակայն երկրորդ դեպքում վերագրումն արտահայտված է բայի դեմքով, թվով, եղանակով ու ժամանակով, ուստի կազմել է ստորոգյալ, ստորոգումնային վերագրում է:

2. Խոսելով թերի նախադասությունների մասին՝ Ս. Արրահամյանը գրում է. «Այն նախադասությունը, որը կառուցվածքային տեսակետից ամբողջական չէ, նրա մեկ անդամը կամ մեկից ավելի անդամները բաց են թողնված, բայց մտքով հասկացվում են, կոչվում է թերի նախադասություն» (էջ 446), մի սահմանում, որ մինչև հիմա տրվում էր ղեղավածով նախա-

³ Այս մասին տե՛ս մեր «Անկնարկներ հայոց լեզվի մեթոդիկայի», էջ 111, Գ. Պոդոսյան, Հայոց լեզու, Երևան, 1976, էջ 204—205:

դասություններին, և քննված են այնպիսի նախադասություններ, որոնց այս կամ այն անդամը, այդ թվում նաև ենթական կամ ստորոգյալը և կամ երկուսը միասին զեղչված են (էջ 451, 452): Կարիր կա՞ մի նոր տերմինով անվանել տրոհի գիտված և բնութագրված այդ երևույթը՝ զեղչումը: ԶԼ՞ որ թերությունը, ինչպես նկատել են (օրինակ՝ Պ. Պողոսյանը)⁴, կարող է վերաբերել մտրին, բովանդակությանը, բայց ոչ կառուցվածքին: Երբ ասում ենք նախադասությունը թերի է, նկատի ենք ունենում բովանդակությունը: Օրինակ՝

«— Ի՞նչ անեմ, մի՞րե մայրը...

— Խնդրում եմ մոր մասին լռել, — ընդհատեց նրան տիկինը:

Կամ՝ «— Հավատարիմ մնալ ինչ-որ անառ...

— Ամուսնուն, պարոն, որն արժանի է դրան, — հարեց տիկինը՝ ընդհատելով խոսքը:

«— Հե՛յ, առաջամասում, — բայց հազը ընդհատեց խոսքը:

Մեր այս օրինակներում ընդգծված կապակցությունները իսկապես թերի նախադասություններ են, քանի որ ընդհատված են, որի պատճառով կարգացողը չի իմանում, թե ինչ է ասում խոսողը:

Կարծում ենք, որ թերի պիտի կոչել այն նախադասությունները, իսկ նախորդները քննել, իբրև զեղչվածով նախադասություններ և վերնադրել «Ջեղչում»:

3. Առայժմ հայ լեզվաբանության մեջ լուծված չէ բացահայտիչի հարցը: Այս առումով էլ, ինչպես առնասարակ, բացահայտիչը դիտված է իբրև բացահայտյալի լրացում և քննված է անվանական լրացումների շարքում (Հ. Օհանյան): Որոշ քերականներ էլ (Պ. Պողոսյան) բացահայտյալն ու բացահայտիչը համարում են համազոր անդամներ, քանի որ դրանց միջև եղած դեմքի ու թվի համաձայնությունը և այն, որ լրացում չընդունող դերանունները նույնպես կարող են բացահայտիչ ունենալ, խոսում են վերջինիս օգտին:

Բացահայտիչն ու բացահայտյալը համաձայնում են թվով, դեմքով ու հոգառությամբ, դրանց միևնույն հոլովով զրգվելը քիտում է լրացյալի պահանջից, իսկ լրացյալը երբեմն կարող է տարրեր հոլովներով լրացումներ ունենալ, այստեղից էլ բացահայտիչ-բացահայտյալների տարբեր հոլովներով արտահայտվելու Օրինակ՝ այդ ձայնը նա լսում էր ամենուրեք՝ տանը, փողոցում, գետի ափին, ծառի վրա: Ինչո՞ւ այս օրինակում ամենուրեք բացահայտյալն ունի տարբեր հոլովներով բացահայտիչներ, որովհետև լսել բայն իբրև տեղի պարագա կարող է ընդունել զանազան հոլովներով բառեր, ինչպես և ժամանակի պարագա, ասենք՝ այդ ձայնը նա միշտ էր լսում՝ դիշերը, լուսաղեմին, ցնեւուց առաջ և այլն: Ուրեմն, կարևորը լրացյալ բայի թելադրանքն է. նա է պահանջում, որ բացահայտիչն ու բացահայտյալը արտահայտվեն միևնույն ձևով: Այս մասին խոսել է Մ. Արեղյանը⁵, նշված է նաև հատորում (էջ 215): Հետևաբար, միշտ չէ 207 էջի ձևակերպումը՝ «բացահայտյալի դեմքը, թվը և հոլովը պարտադրվում են բացահայտիչին», պիտի բացառել հոլովը:

Դալով մասնական բացահայտիչին՝ պիտի ասենք, որ այն՝ հատորում նույնպես հիմնավոր չի բնութագրվում: Այդ մասնական կոչվածը չունի քերականական այն հատկանիշները՝ կայուն շարահասություն, հոգառություն, դեմքի ու թվի համաձայնություն, որոնք բնորոշ են բացահայտիչին և պարտադիր թե՛ Մ. Արեղյանը, թե՛ հատորի հեղինակները գտնում են, որ երբեմն իբրև, օրպես բառերով կապված բացահայտիչները (մասնական) պարագայական իմաստ են արտահայտում: Կարծում ենք, որ մասնական կոչված բացահայտիչը միշտ էլ պարագայական իմաստ է արտահայտում: Հենց հատորում բերված օրինակներում՝ «...ինքը, իբրև հայոց ընդհանուր սալաբալսու, ինչպես պետք է կազմակերպե յուր հրամանի ներքո գտնված հայկական զորքերը» և «Պահանջեցին, որ Ղուկասը, օրպես ֆերմայում աշխատող կոմունիստ, պատասխանի այդ հարցին» (էջ 217), ընդգծված կապակցությունները հիմունքի պարագա են, ցույց են տալիս, թե ինչի՞ հիման վրա է զորքերի կազմակերպման հոգսը ընկած նրա վրա (որովհետև սպարապետ է), ինչի՞ հիման վրա պիտի Ղուկասը պատասխանի (որովհետև կոմունիստ է): Հաճախ այդ իբրև, օրպես բառերով կապված մասնական կոչված բացահայտիչները չեն էլ տրոհվում բացահայտյալից (տե՛ս հենց հատորում բերված օրինակներում. «Միտինգը բաց անելու իրավունքը պատկանում է իրեն իբրև կուսակցության ղեկավարի», «Միշտ հետևվել եմ ջեզ որպես իմ տիրոջ», էջ 217): Ուրեմն, այս տեսակետից էլ այն բացահայտիչ չէ, քանի որ բացահայտիչը միշտ տրոհվում է բացահայտյալից: Կա՞ այս կապակցություններում մասնականության իմաստ. այո՞, բայց այդ իմաստը կապված է բայի հետ, բայի լրացումն է:

4 Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 188:

5 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 398:

Այսպիսով, քերականական ոչ մի հատկանիշով՝ ո՛չ համաձայնությամբ, ո՛չ շարադասությամբ և ո՛չ էլ տրոհությամբ, մասնական կոչված բացահայտիչը նման չէ բացահայտիչին, չունի այդ հատկանիշները, այն կապված է բայի կամ այլ լրացյալի հետ և ունի պարագայական (ձևի, հիմունքի, մասնականության) իմաստ:

Նկատենք, որ որոշ թեմաներ հեղինակների ուշադրությունից վրիպել են կամ դրանց ուղղակի չեն ցանկացել անդրադառնալ՝ բավարարվելով իրենց նախորդ հետազոտություններով, օրինակ՝ հատորում ոչ մի խոսք չկա ժխտական նախադասությունների մասին: Թեև կետադրությունը շարահյուսական այս կամ այն հարցի առնչությամբ հիշատակված է, բայց ցանկալի էր, որ այն ամփոփ ձևով տրվեր աշխատության վերջում: Դա կունենար նաև գործնական, նորմավորող նշանակություն. մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այսօր կետադրության նշանների կիրառության մեջ խախտումներ ու փոփոխություններ են նկատվում, հատկապես թարգմանական գրականության մեջ և օրաթերթներում: Հատորում տեղ չեն գտել նաև համանիշության և համանունության հարցերը:

Աշխատությունում կան անհամապատասխան օրինակներ, վրիպումներ և այլ մանր թերություններ: Օրինակ՝ արագությամբ հեռանալ Բաղրամի, մատիտով նամակ դրել, զիբր տալ Աշոտին բառակապակցություններում (էջ 20) ընդգծված լրացումները սխալմամբ համաստորագաս են համարված: Վերաբերության հարաբերություն է դիտված նամակ ընկերոջս, լվատախան ղիմսդներին բառակապակցություններում (էջ 38): Սրանք, սակայն, որակ չեն կազմում:

Ավարտելով մեր խոսքը երրորդ հատորի մասին՝ գոհունակությամբ պիտի նշենք, որ այս աշխատությամբ մենք ունենք ժամանակակից արևելահայերենի շարահյուսական կառուցվածքի գիտական ամբողջական ու լիակատար մի ուսումնասիրություն:

ՍԻՐԱԲ ԳՅՈՒԼՐՈՒԿԱՂՅԱՆ
Քանասիրական գիտությունների թեկուծ